Մասնակցություն 05 դրամաշնորհ
գնահատում Լ. Վարդանյան
13.05.2025թ.

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ԲԱԺՆԻ ՊԵՏ ՆԱԻՐԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության քաղաքականության և զարգացման ծրագրերի բաժնում՝ 2024 թվականի մայիսի 13-ի N 03 Պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացման ժամանակահատվածում (13.05.2024-13.05.2025թթ.) ծանոթացել եմ Կոմիտեի կանոնադրությանը, «Ներքին կարգապահական կանոնների» դրույթներին և էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության՝ Mulberry 2 համակարգին:

Միաժամանակ, աշխատանքային գործունեության ընթացքում իրականացրել եմ ուսումնասիրություն, մասնավորապես, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքների, ՀՀ կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի N 156-Ն «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, նպատակային-ծրագրային, գիտական դրամաշնորհային ձևով պետական ֆինանսավորման կարգերը հաստատելու մասին» և 2023 թվականի դեկտեմբերի 21-ի N 2298-Ն «Գիտական կադրերի ատեստավորման կարգը, գիտական պետական կազմակերպություններում գիտական և ճարտարագիտատեխնիկական պաշտոնները և դրանց գնահատման նվազագույն չափանիշները հաստատելու մասին» որոշումների և այլ իրավական ակտերի:

Նշված ժամանակահատվածում նաև մասնակցել եմ.

✓ ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի «Բարձրագույն կրթություն» և «Գիտություն» բաժինների միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունների մշակման աշխատանքներին,

✓ «Կին ղեկավարների առաջխաղացմանն ուղղված ծրագիր 2024» մրցույթի հրավերի փաթեթի նախապատրաստման, հայտերի ընդունման, ուսումնասիրության, վերլուծության, շտեմարանների ստեղծման և վարման աշխատանքների իրականացման, ինչպես նաև

համապատասխան մրցույթի շրջանակներում ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրերի մշակման աշխատանքներին,

✓ Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի ընթացիկ և եռամյա հաշվետվությունների ընդունման գործընթացին,

✓ բաժնի լիազորությունների շրջանակներում առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, միջնորդագրերի, զեկուցագրերի և այլ գրությունների նախապատրաստման աշխատանքներին:

ԲԿԳՔՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՍՄԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ

13.05.2025 թ.